ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Հինգշաբթի, 7 հունիսի 2018 թ.

«Հետք» էլեկտրոնային թերթի լրագրող
Սեդա Ղուկասյանին

Հարգելի Սեդա Ղուկասյան, ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հետ կապված հունիսի 7-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում վարչապետն արդեն իսկ արտահայտել է իր դիրքորոշումը: Պարտադիր բաղադրիչի կասեցում չի նախատեսվում, սակայն դրա կիրառման հետաձգումը նախատեսվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկված օրենսդրական նախաձեռնությամբ, որն արդեն կառավարությունում դրված է շրջանառության մեջ:

Վարչապետի գնահատմամբ, կենսաթոշակային ֆոնդերը կառավարող ընկերություններն ամբողջ աշխարհում իրենց կառավարման ներքո ունեն մեծածավալ ակտիվներ, գործունեություն են ծավալում բազմաթիվ պետություններում և դասվում են աշխարհի խոշորագույն ընկերությունների շարքին: Այս ընկերությունների նկատմամբ վստահությունը հիմնված է տվյալ ընկերությունների միջազգային մեծ փորձի և նրանց կառավարման ներքո գտնվող ակտիվների ծավալների վրա: Հայաստանում նրանց հետագա ճակատագիրը միջազգայնորեն ճանաչված գնահատական է լինելու Հայաստանում ներդրումներ անելու հուսալիության աստիճանին: Կառավարությունը կուտակային համակարգի հետ կապված կաշխատի մաքսիմալ թափանցիկ և կանի առավելագույնը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու: Միաժամանակ նշենք, որ կուտակային կենսաթոշակային համակարգի նկատմամբ նախկինում եղած անվստահությունը հիմնականում բխում էր ոչ թե հիշյալ ֆոնդերի, այլ նախկին իշխանությունների նկատմամբ եղած վստահության դեֆիցիտից:

Հայտնում ենք նաև, որ վարչապետը պարբերաբար հետևել է իր հաշվին առկա գումարների հոսքին, սակայն ֆոնդի կառավարչին փոխել չի փորձել: Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին առաջարկվող օրենսդական փոփոխությունների արդյունավետության վերաբերյալ վարչապետն իր վերջնական տեսակետը կհայտնի կառավարության առաջիկա այն նիստի ընթացքում, որի օրակարգում ընդգրկված կլինի տվյալ նախագիծը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար **Էդուարդ Աղաջանյան**

Հեռախոս/ Ֆաքս՝(374 10) 52-87-12,
Phone/Fax: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am